Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշար

2020-2021 ուստարի

(տևողությունը՝ 180 րոպե)

X դասարան

Սիրելի՛ մասնակից: Առաջնորդվի՛ր «Զգացմունքը գրականության ուղեղն է» հրաշալի սկզբունքով և համարձակ շարադրի՛ր մտքերդ՝ բացահայտելով քո ինքնուրույն մտածողությունը:

Սիրով և հավատով՝ Աբազյան

1.Միջնադարյան տաղերգության ընդհանուր բնութագիրը. Ֆրիկը՝ որպես միջնադարյան հայ բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչ:
Ֆրիկի բերած նորությունները: «Գանգատ» բանաստեղծությունը՝ սոցիալական բողոքի բարձրակետ:

5մ.

2. Միջնադարյան հայրեններ: Հայրեն եզրույթի բացատրությունը: Հայրենների թեմատիկան: Սիրային հայրենների հերոսը և հերոսուհին: Սիրած աղջկան դիմելու ձևը: Ո՞ւմ են վերագրվում հայրենների մեծ մասը:
Վերլուծել որևէ հայրեն՝ նշելով թեմատիկան:

5մ.

3.Սայաթ-Նովան՝ պալատական երգիչ: Բանաստեղծի մեծ սերը: Միրո բացատրությունը: Ի՞նչ է սերն ըստ Սայաթ-Նովայի:

5մ.

4.Խաչատուր Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիր: «Վերք Հայաստանի»-ն՝ որպես նոր ժամանակների էպոս: Վեպի վերնագրի՝ «Վերք»-ի և ենթավերնագրի՝ «Ողբ….»-ի բացատրությունը՝ ըստ երկի բովանդակության:
Սասունցի Դավիթ և Աղասի: Երկու հերոսների ընդհանրությունը:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան